ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
14.08.2017թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2017/6Շ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «30» հունվարի 2018թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն Գ. Սեդրակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, և հիմք ընդունելով Կողմերի միջև 14.08.2017թ. ԿՆՔՎԱԾ N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2017/6Շ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը համաձայնվեցին.

1.1 Հաստատել Համաձայնագրի 2018թ. օրացույցային գրաֆիկը համաձայն հավելված 1-ի (կցվում է) :

1.2 Հաստատել Համաձայնագրի 2018թ. վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 2-ի (կցվում է) :

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	<<Մոնտաժտրանսսշին>> ՓԲԸ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3	Ք. Երևան, Շիրակի 74/2
Կենտրոնական Գնումների գրասենյակ	<<Արդշինբանկ>> ՓԲԸ Վեդի մ/ճ
Հ/Հ 900011005809	Հ/Հ 2477604600940000
ՀՎՀՀ 02563518	ՀՎՀՀ 02266448
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հաստատված է
N ՏԿՆ-ԲԸԱԾՁԲ-2017/60 գնման պայմանագրի
«-----» հունվարի 2018թ. ընթացած
թիվ 1 Համաձայնագրով
ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 1

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ա/ճանապարհի ԿՄ85+500 հատվածում կամրջի վերանորոգման աշխատանքներ (2018թ.)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Լաբորատոր փորձարկումներ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 5 օրացույցային օր	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 150 օրացույցային օր
	Նախապատրաստական աշխատանքներ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 5 օրացույցային օր	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացույցային օր
2	Հիմնական աշխատանքներ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 5 օրացույցային օր	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 150 օրացույցային օր
3	Հողային աշխատանքներ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 5 օրացույցային օր	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացույցային օր
4	[illegible]	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 5 օրացույցային օր	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացույցային օր
5	Ճանապարհային հագուստ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 5 օրացույցային օր	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 60 օրացույցային օր
6	Կահավորում	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 5 օրացույցային օր	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 150օրացույցային օր
	Ընդհանուր աշխատանքներ	Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 5 օրացույցային օր	**Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո 150 օրացույցային օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Գ.Նժդեհի 3/3
Կենտրոնական Գանձապետարան
ՀՎՀՀ 90001005809
ԱՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մոնտաժտրանսսշին>> ՓԲԸ
Ք. Երևան, Շիրակի 74/2
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Վեդի մ/հ
Հ/Հ 2477604600940000
ՀՎՀՀ 02266448

/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է
N ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/6Շ գնման պայմանագրի

«-----» հունվարի 2018թ. կնքված
թիվ 1 Համաձայնագրով

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221117/1	Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի ԿՄ85+500 հատվածում կամրջի վերանորոգման աշխատանքներ		45,168,470.0	45,168,470.0	45,168,470.0	45,168,470.0	45,168,470.0	45,168,470.0	45,168,470.0	45,168,470.0	45,168,470.0	45,168,470.0	45,168,470.0	**45,168,470.0**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011005809

/Ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մոնտաժտրանսսշին>> ՓԲԸ
Ք. Երևան, Շիրակի 74/2
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Վեդի մ/ճ
Հ/Հ 2477604600940000
ՀՎՀՀ 02266448

/Ստորագրություն/

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2017/6Շ

ք. Երևան

«14» սեպտեմբերի 2017թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մոնտաժտրանսսշին» ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն Գ. Սեդրակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Կմ85+500 հատվածում կամրջի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 240 օրացույցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել

Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 90 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել

աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1 տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015

թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 50134442 (հիսուն միլիոն հարյուր երեսունչորս հազար չորս հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ, որից 8355740 (ութ միլիոն երեք հարյուր հիսունհինգ հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Ընդ որում 2017թ. իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 4 965 972 (չորս միլիոն ինը հարյուր վաթսունհինգ հազար ինը հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև --------- (----------) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.
Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.
ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը

Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011005809
ՀՎՀՀ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մոնտաժտրանսսշին>> ՓԲԸ
Ք. Երևան, Շիրակի 74/2
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Վեդի մ/մ
Հ/Հ 2477604600940000
ՀՎՀՀ 02266448

/ստորագրություն/
Կ.Տ

«ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՇԻՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
CLOSED JOINT-STOCK COMPANY
«МОНТАЖ-ТРАНССШИН»
«MONTAGE-TRANSSHIN»
02266448

Հավելված թիվ 1
« » 2017թ. կնքված
ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2017/6Շ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-3, ՄԱՐԳԱՐԱ-ՎԱՆԱՁՈՐ-ՏԱՇԻՐ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿՄ85+500 ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի ԿՄ85+500 հատվածում կամրջի վերանորոգման աշխատանքներ (Ընդհանուր)

<< դրամ

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
	I. Նախապատրաստական աշխատանքներ				
1	Տր. միջոցների երթևեկությունը կարգավորող և արգելող ճան. նշանների պատրաստում և տեղադրում՝ հետագա կազմատումով.	հատ	27	48963	1322014
2	Անվտանգության գոտիներից գրունտի մաքրման և հեռա-ցման հող. աշխատանքներ ձեռքով՝ բարձում ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 1 կմ հեռ. վրա($10^{Բ}$- II):	$մ^3$	4.5	3953	17789
3	Պահպանված թուջ-մետաղական բազրիքների (L_1=2.97 մ) սեկցիաների կազմատում, կոռնկով բարձում ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 1կմ հեռավորության վրա, թուջ P=2.794 տ, պողպատ P=1.094 տ:	գծ.մ	12	11440	137282
4	Ե/բ մայթերի բլոկների կազմատում ինքնագնաց սլաքավոր 5տ բ.բ ամբարձիչով չափ. 58x165x299սմ,քաշը-1.70 տ, բարձում ինքնաթափ և տեղափոխ. լցակույտ 1 կմ հեռ. վրա:	$մ^3$	5.44	20053	109086
5	Մայթերի բլոկների տակի բետոնի կազմատում պնևմագործիքով, բեկորների ձեռքով բարձում ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 1 կմ հեռ. վրա:	$մ^3$	0.9	32629	29366
6	Կամրջի երթ. մասի ա/բետոնե ծածկի կազմատում պնևմագործիքով, գրեյդերով բեկորների տեղափոխում մինչև 50մ կույտավորումով և բարձում ինքնաթափ էքսկավատորով 0.65 $մ^3$ շ.տ. ($h_{միջ}$=0.12մ), տեղափոխում լցակույտ 1 կմ հեռ. վրա:	$մ^3$	10.79	8063	87002
7	Նույնը՝ պաշտպանիչ շերտի ամրանավորված բետոնի (h=0.04մ), նույնը՝ ջրամեկուսացման (h=0.01մ):	$մ^2$	83.1	2877	239042
8	Նույնը՝ հարթեցնող շերտի ցեմենտային շաղախի(h=0.02մ):	$մ^3$	1.66	14933	24788

9	Նույնը՝ հոսքային եռանկյունու միաձույլ բետոնի:	մ³	4.99	32798	163661
10	Դեֆորմացիոն կարերի կազմատում՝ ձեռքով բարձում ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 1 կմ հեռ. վրա:	գծ.մ	17.32	2878	49843
11	Գրունտի մաքրման և հեռացման հող. աշխատանքներ ֆերմատակերից ձեռքով:	մ³	0.6	2518	1511
12	Կենցաղային աղբի կույտավորում ձեռքով բարձում ինքնաթափ տեղափոխում լցակույտ 1 կմ հեռ. վրա:	մ³	0.8	2935	2348
				1. Ընդամենը	*2183732*
	II. Հիմնական աշխատանքներ				
1	Թռիչքային կառուցվածքի T-աձև հեծանների սալային հատվածների եզրերի նորոգում ցեմ. շաղախով(M200):	մ²	12.1	2898	35067
2	Նույնը կողերի(M200):	մ²	20.2	2893	58445
3	Նույնը ПР-9 մամնիշի եզրային սալերի(M200):	մ²	20.6	2895	59645
4	Թռիչքային կառուցվածքի հեծանների և սալերի կոռոզիայի ենթարկված ամրանների մաքրում մետաղական խոզանակներով, հետագայում ծածկելով 0,1մ³ միաձույլ բետոնով (B25, F200):	մ²	0.8	18691	14953
5	Թռիչքային կառուցվածքի T-աձև հեծանների միավորում եռակցումով դիաֆրագմաների ներդիրներին պողպատե թիթեղներ - 10x100x100մմ (Պողպատ Cr3):	հատ	48	724	34773
6	Հենարանների ֆերմատակերի միավորման հատվածների նորոգում միաձույլ բետոնով(B25, F200):	մ³	0.15	145340	21801
7	Հենարանների ֆերմատակերի միավորման հատվածների նորոգում ցեմ. շաղախով(M200):	մ²	0.8	2895	2316
8	Նույնը ֆերմատակերի հավաքովի կոնստրուկցիաների և վերևի միաձույլ բետոնից եզրային աճեցված մասերի:	մ²	36.4	2895	105393
9	Նույնը հավաքովի երկաթբետոնե կանգնակները:	մ²	35.2	2895	101918
10	Նույնը ուղղահայաց հետևի պատերը (M200):	մ²	42.2	2895	122186
11	Հողային աշխատանքներ էքսկավատորով 0.65 մ³ շ.տ. հողային պաստառի կազմատում, բարձում ինքնաթափ տեղափոխում լցակույտ 1 կմ հեռ. վրա(33ТП):	մ³	495.4	1370	678732
12	Նույնը ձեռքով բարձում ինքնաթափ տեղափոխում լցակույտ 1 կմ հեռ. վրա:	մ³	55	5218	286970
13	Հիմքերի համար փոսորակների փորման հողային աշխատանքներ էքսկավատորով 0.65 մ³ շ.տ.:	մ³	113.4	901	102124
14	Հիմքերի համար փոսորակների փորման հողային աշխատանքներ ձեռքով:	մ³	20	3586	71729
15	Խճային նախապատրաստական շերտի տեղադրում (H=0,1 մ):	մ³	4.74	8282	39255

16	Ուղղահայաց հենարանների (կենտրոնական սեկցիաների պատերի) հիմքերի միաձույլ ե/բ-ի կառուցում, ա.պ.=43,28կգ/մ3(AIII); Ø16 P=0,14844տ, Ø12 P=0,15524տ, Ø10 P=0,11876տ, (B30, F200):	մ³	9.76	135541	1322876
17	Նունը պատերի իրանների, ա.պ.=184,29կգ/մ3; AI Ø8 P=0,03996տ, AIII Ø32 P=2,17168, Ø22 P=1,05632տ, Ø16 P=0,26052տ, Ø14 P=0,15416տ, Ø10 P=0,47504տ(B30, F200):	մ³	22.56	222124	5011116
18	N1 հենարանի ուղղահայաց հենարանների հակադարձ (հետադարձ) պատերի հիմքերի միաձույլ ե/բ-ի կառուցում, ա.պ.=10,15կգ/մ3 (AIII); Ø16 P=0,10942տ, Ø10 P=0,0337տ (B30, F200):	մ³	14.1	100339	1414778
19	N2 հենարանի ուղղահայաց հենարանների հակադարձ (հետադարձ) պատերի հիմքերի միաձույլ ե/բ-ի կառուցում, ա.պ.=9,94կգ/մ3 (AIII); Ø16 P=0,11984տ, Ø10 P=0,03804տ (B30, F200):	մ³	15.88	100224	1591553
20	N1 հենարանի ուղղահայաց հենարանների հակադարձ (հետադարձ) պատերի իրանների միաձույլ ե/բ-ի կառուցում, ա.պ.=111,85կգ/մ3 (AIII); Ø22 P=0,8015տ, Ø14 P=0,04696տ, Ø10 P=0,1649տ (B30, F200):	մ³	9.06	163028	1477037
21	N2 հենարանի ուղղահայաց հենարանների հակադարձ (հետադարձ) պատերի իրանների միաձույլ ե/բ-ի կառուցում, ա.պ.=95,39կգ/մ3 (AIII); Ø22 P=0,84774տ, Ø14 P=0,0274տ, Ø10 P=0,18182տ (B30, F200):	մ³	11.08	153939	1705649
22	Հենարանների և կցորդման կոնստրուկցիաների գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկու-սացում երկշերտ տաք բիտումով:	մ²	365.1	1307	477304
23	Փոսորակների հետլիցք բուլդոզերով: Գրունտի տեղադրումը շերտերով ջրի լցաբախշումով և խտացում պնևմատոփանով (33ՊՍ):::	մ³	68.9	891	61375
24	Փոսորակների հետլիցք ձեռքով: Գրունտի տեղադրումը շերտերով ջրի լցաբախշումով և խտացում պնևմատոփանով:	մ³	20	1833	36653
25	Երկայնական դրենաժի իրականացում. ա) յուղոտ կավի մշակում կավահանքում 0.65 մ3 շ.տ. էքսկավատորով, բարձում ինքնաթափ: Տեղափոխում 5 կմ հեռ. վրա, տեղադրում խտացումով պնևմատոփանով (h=0.2մ); բ) քարի լիցքի մշակում քարահանքում 0.65 մ3 շ.տ. էքսկավատորով, բարձում ինքնաթափ: Տեղափոխում 3 կմ հեռ. վրա, տեղադրում խտացումով պնևմատոփանով(h=0.3մ):	գծմ	22.16	16306	361335
26	Ջրահեռացման խողովակներ PVC d=100մմ (L_1=0,4մ):	գծ.մ	3.2	2177	6965

27	Կցերդումներում հողային պաստառի իրականացում. գրունտի մշակում պահոցում 0.65 մ3 շ.տ. էքսկավատորով, բարձում ինքնաթափ: Տեղափոխում 2 կմ հեռ. վրա: Գրունտի տեղադրումը շերտերով ջրի լցաբախշումով և խտացում պնևմատոփանով (10elV):	մ³	317.5	2509	796548
28	Նույնը կոների:	մ³	92.4	2514	232326
29	Կոների մակերևույթների հարթեցում ձեռքով:	մ²	98.5	430	42393
30	Տապաստների բլոկների տակ խճային նախապատրաստում (h=0.4մ):	մ³	13.5	8283	111823
31	Л-3 տապաստների բլոկների հավաքովի ե/բետոն, չափ. 50x63(58)x480 սմ, քաշ-3,625տ, ա.պ. AI=20,5 կգ/մ3, AIII=74,6 կգ/մ3 (B30, F200):	մ³	5.8	298145	1729240
32	Տապաստների բլոկների միավորման ե/բետոն, ա.պ. AI=20,5 կգ/մ3 (B30, F200):	մ³	0.54	94296	50920
33	Անցումային սալերի տակ կոպճաավազային նախապատրաստական շերտ (h=0.1մ):	մ³	10.3	6931	71394
34	П1-6 անցումային սալերի հավաքովի ե/բետոն: չափ. 30x98x600 սմ, քաշը – 4,25 տ, ա.պ. AI=23,9 կգ/մ3, AIII=69,2 կգ/մ3 (20հատ B30, F200):	մ³	34	292116	9931953
35	Անցումային սալերի միավորման ե/բետոն (մանր խճի օգտագործումով), ա.պ. Ø3 AI=19.73 կգ/մ³(B30, F200):	մ³	1.75	93859	164254
36	Հոսքային եռանկյունու իրականացում միաձույլ բետոնից $H_{միջ}$=8սմ(B20, F100):	մ³	9.58	73263	701859
37	Հարթեցնող շերտի իրականացում միաձույլ բետոնից (մանր խճի օգտագործումով) H=3սմ (119.8 մ²) (B20, F100):	մ³	3.59	78725	282623
38	Անցումային սալերի սոսնձային ջրամեկուսացում երկշերտ իզոգամից h = 0.8 սմ:	մ²	139.7	9747	1361634
39	Պաշտպանիչ շերտ միաձույլ բետոնից W6, H=4սմ ամրանավորված ցանցով (100x100) մմ &4 БР-1: P=0,277 տ(139.70 մ²) (B25, F200):	մ³	5.59	152226	850943
40	Թռիչքային կառուցվածքի հատվածում հոսքային եռանկյունու իրականացում միաձույլ բետոնից h=3-12,9սմ (B20, F100):	մ³	7.29	73347	534701
41	Դեֆորմացիոն կարերի իրականացում. ա) երկայնականներ L=18,0մ; բ) լայնականներ L=23,56մ:	գծ.մ	41.56	28190	1171562
42	Հարթեցնող շերտի իրականացում միաձույլ բետոնից (մանր խճի օգտագործումով) H = 3սմ(91.70 մ²) (B20, F100):	մ³	2.75	79947	219855
43	Թռիչքային կառուցվածքների սոսնձային ջրամեկուսացում երկշերտ իզոգամից H = 0.8 սմ:	մ²	109.4	9747	1066283

44	Պաշտպանիչ շերտ միաձույլ բետոնից W6, H=4սմ ամրանավորված ցանցով (100x100) մմ &4 БР-I: P=0.1816 տ(91.70 մ²) (B25, F200):	մ³	3.67	152214	558625
45	Ցեմենտային շաղախ h = 3սմ (M200):	մ²	10.8	1902	20541
46	Ցեմենտային շաղախ БР-1 բլոկների տակ H = 2սմ (M200):	մ²	10.8	1347	14550
47	БР-1 մակնիշի անվահրիչ բլոկների տեղադրում 5տ բ.բ. ամբարձիչով, չափ. 60x75x300սմ, P=1,375տ; ա.պ. AI =27.58 կգ/մ3, AIII=158.15 կգ/մ3 (3.3մ3 B30, F200):	հատ	6	276274	1657644
48	Անվահրիչների հենակների միաձույլ բետոն(B20, F100):	մ³	0.61	77861	47495
49	Ողողատե բազրիքների իրականացում H=0,65մ L₁=2,97մ սեկցիաների անակը 6 հատ L63x63x6մմ L=7,56մ, P=43,26կգ; L50x50x5մմ L=35,28մ, P=133,20կգ; L70x70x6մմ L=17,82մ, P=114,0կգ; AIØ12մմ L=45,36մ, P=40,80կգ; 5x50մմ L=1,56մ, P=3,20կգ (0.33446տ) Ողողատե բազրիքների երկշերտ ներկում նախնական ներկապատումով:	մ	18	14209	255770
50	Երթևեկելի մասի ներքին շերտի մանրահատիկ ասֆալտբետոնի տեղադրում h = 4 սմ:	մ²	91.7	5251	481500
51	Նույնը՝ վերևի շերտի h = 3 սմ:	մ²	93.5	4022	376097
52	Ավազակոպճային նախապատրաստում կցորդումներում (անվահրիչների հիմատակեր) h=0,1մ, L₁=1,6մ:	մ³	0.45	7082	3187
53	Հավաքովի ե/բետոնե անվահրիչների բլոկների տեղադրում կցորդումներում, չափ. 50x75x150 սմ, P = 0.50 տ, ա. պ. = 84.45 կգ/մ3 (4 հատ B25, F200):	մ³	0.8	681656	545325
54	Անվահրիչների ուղղաձիգ գծանշում:	մ²	13.00	920	11965
55	Անվտանգության գոտիների հորիզոնական գծանշում:	մ²	18.72	110	2064
56	Ներդիր տարրերի պատրաստում և տեղադրում №1 հենարանի կենտրոնական սեկցիաների և հակադարձ պատերի իրաններում 10x300x300 մմ, n=4հատ, P=0,0283տ; խարիսխներ Ø16AIII (L1=200մմ), P=0,0051տ: Ողողատե թիթեղների պատրաստում և եռակցում ներդիրներին 10x250x625մմ, n=2հատ, P=0,02454տ:	տ	0.058	684914	39725
				2. Ընդամենը	*38536747*

	ԿԱՄՐՋԻ ԿՑՈՐԴՈՒՄՆԵՐ				
	III Հողային աշխատանքներ				
1	Բնահողի մշակում էքս 0.65մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ (33՛ III)	մ³	201.2	1352.48	272119
2	Բնահողի քանդում ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1.0կմ (33՛ III)	մ³	22.35	5150.96	115124
				3. Ընդամենը	***387243***
	IV Կողնակներ				
1	Կողնակների լրացում ավազակոպճային բնահողով h 28 սմ (բնահող 6ե-III էքս-1.25և3 շ.տ. պահուստ 7կմ)	մ³	33.94	2526.40	85746
				4 Ընդամենը	***85746***
	V Ճանապարհային հագուստ				
1	Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	485.5	6363.47	3089465
2	Խոշորահատիկ ա/բ h=7սմ	մ²	485.5	8273.78	4016922
3	Խճային հիմք h=16 սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ2	մ²	504.86	3606.85	1820952
4	Ավազակոպճային շերտ h=10 սմ	մ²	647.74	506.24	327909
				5. Ընդամենը	***9255248***
	VI Կահավորում				
1	Գծանշման ընդհանուր մակերեսը	մ²	15.84	1090.17	17264
2	Մետաղական արգելափակոցների տեղադրում d=4մմ, կանգնակը՝(շվելլեր N16կոշտ հարվածամարիչով-28հատ), քայլը 4.0մ, լուսանդրադարձիչներ - 24 հատ, B-12.5 - 0.911մ3, Հեղույս, մանեկ, տափոդակ - 43.06կգ (96x0.46) կանգնակ 28հատ 51,8գծմ	գծմ.	96	19059.39	1829701
3	Գոյ. ունեցող մետաղական արգելափակոցների ապամոնտաժում, վերադարձ սեփականատիրոջը	գծմ.	88	2286.58	201219
				6. Ընդամենը	***2048184***
				Ընդհանուրը	***52884143***

**միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.*

Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ա/ճանապարհի Կմ85+500 հատվածում կամրջի վերանորոգման աշխատանքներ (2017 թվական)

դրամ <<

NN	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդհանուր արժեքը
	I. Հիմնական աշխատանքներ				
1	Π1-6 անցումային սալերի հավաքովի ե/բետոն: չափ. 30x98x600 սմ, քաշը – 4,25 տ, ա.պ. AI=23,9 կգ/մ3, AIII=69,2 կգ/մ3 (10հատ B30, F200):	$մ^3$	17	292116	4965972
				2. Ընդամենը	*4965972*
				Ընդհանուրը	*4965972*

**Միավորի արժեքը ներառում է շահույթը և Ա.Ա.Հ.*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<< տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
<<Հ 900011005809
<<Հ 02565518

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մոնտաժտրանսսշին>> ՓԲԸ
Ք. Երևան, Շիրակի 74/2
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Գյումրի
Հ/Հ 247760460050000
ՀՎՀՀ 02265448

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« » 2017թ. կնքված
ՏԿՆ-ԲՄԱԵՁԲ-2017/6Ե ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՑԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ա/ճանապարհի ԿՄ85+500 հատվածում կամրջի վերանորոգման աշխատանքներ

(2017թ.)

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
1	Π1-6 անցումային սալերի հավաքովի ե/բետոն: չափ. 30x98x600 սմ, քաշը – 4,25 տ, ա.պ. AI=23,9 կգ/մ3, AIII=69,2 կգ/մ3 (10հատ B30, F200):	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	30.11.2017թ.
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	30.11.2017թ.

ՕՐԱՑՈՒՑԱՑԻՆ ԳՐԱՖԻԿ

Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ա/ճանապարհի ԿՄ85+500 հատվածում կամրջի ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կատարվելիք վերանորոգման աշխատանքներ

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
1	Նախապատրաստական աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 10 օրացույցային օր
2	Հիմնական աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 150 օրացույցային օր
3	Հողային աշխատանքներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 180 օրացույցային օր
4	Կողնակներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 200 օրացույցային օր
5	Ճանապարհային հագուստ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 220 օրացույցային օր
6	Կահավորում	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 240 օրացույցային օր
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո**	**Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 240 օրացույցային օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<< տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Կալանդարյան 28
Կենտրոնական Գանձապետարան
<Հ< 900011005809
ՀՎՀՀ 02565818

/ստորագրություն/ Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մոնտաժտրանսշին ՓԲԸ>>
ք. Երևան, Շիրակացի 2/2
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Վերամբակ
<Հ< 247760960000000
ՀՎՀՀ 02266448

/ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 3
« » 2017թ. կնքված
ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2017/6Շ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221117/1	Մ-3, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի ԿՄ85+500 հատվածում կամրջի վերանորոգման աշխատանքներ	-	-	-	-	-	-		4 965 972	4 965 972	4 965 972	4 965 972	4 965 972	4 965 972

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011005809
ՀՎՀՀ 02966518

/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մոնտաժտրանսսշին>> ՓԲԸ
Ք. Երևան, Շիրակի 74/2
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Վեր[illegible]
Հ/Հ 2477604600940[illegible]
ՀՎՀՀ 02266448

/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 10
ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2017/6Շ ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «_____»_____ 20 թ.**

„Մոնտաժտրանսսշին„ ՓԲԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Գրիգոր Սեդրակյանի,նույնականացման քարտ 007716129,տրված 15.03.2016թ., 003-ի կողմից

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է << տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2017/6Շ ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

„Մոնտաժտրանսսշին„ ՓԲԸ
ընկերության անվանումը

ք.Երևան,Շիրակի 74/2
ընկերության հասցեն

„Արդշինբանկ„ Վեդի մ/6
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

h/h 2477604600940000
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀԿՀՀ 02266448
ընկերության հարկ վճարողի նույնականացման համարը

Գրիգոր Սեդրակյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը (Ստորագրությունը)

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[3] N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն ,,Մոնտաժտրանսսշին,, ՓԲԸ

4. Վճարողի բանկը՝ ,,Արդշինբանկ,, Վեդի մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ հ/հ 2477604600940000

6. Վճարողի ՀՎՀՀ՝ ՀՎՀՀ 02266448

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565518

10.Շահառուի բանկը՝ Կենտրոնական Գանձապետարան

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900005000758

12.Գումարը թվերով և բառերով՝ 5020000 (հինգ միլիոն քսան հազար)

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/6Շ

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»: